ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԹԱՓ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Ընթերցողները ծանօթ են Ղարաբաղի ճակատագրի հետ առնչուող այն իրադարձութիւններուն, որոնք տեղի ունեցան 1988-ի վեց ամիսներուն ընթացքին՝ Երեւանի և Ստեփանակերտի մէջ:

Օգոստոս-Սեպտեմբեր ամիսները յարաբերաբար հանդարտ ժամանակաշրջան մը կարելի է նկատել, Թէեւ վարագոյրներու ետին տենդագին աշխատանքներ կը տարուէին հայ ժողովուրդը յուզող հարցին ընդունելի լուծում մը գտնելու համար: Ղարաբաղի մարզային Կոմիտէի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսեանի հարցազրոյցը «Ղարաբաղ» թերթի խմբագրին հետ յատկանշական էր:

Դժբախտաբար սակայն Սեպտեմբերի երկրորդ կէսին հեռագրալուրերը տագնապալի հաղորդումներ կատարեցին: Ըստ հաղորդումներուն Ղարաբաղի մէջ հայ աշակերտներ փոխադրող օթօքարի մը վրայ կրակ բացուած է և կան բազմաթիւ վիրաւորներ, որոշ թերթեր կը պնդեն թէ կան զոհեր եւս:

Դպրոցական օթօքարի վրայ կատարուած ոճրային արարքէն առաջ, այլ երեւոյթներ Ստեփանակերտի ու Երեւանի մէջ արդէն ստեղծած էին ելեկտրականացած մթնոլորտ մը: Կրկին ըստ միջազգային հեռագրալուրերու հաղորդումներուն, Խորհրդային Միութեան կեդրոնական կառավարութեան Ղարաբաղի զարգացման համար յատկացուած բազմամիլիոն գումարները իրենց նպատակին չեն հասնիր: Ըստ ստացուած լուրերու, Ղարաբաղի իրաւունքը հանդիսացող դրամական յատկացումը կը ծախսուի «Հայաստանէն Ատրպէյճան փոխադրուած ազերիներուն»:

Բողոքելու համար վերոյիշեալ վտանգաւոր և արիւնալի արարքներու դէմ, Երեւանի մէջ տեղի ունեցան բազմահազարանոց ցոյցեր: Անգլիական հեռատեսիլի հաղորդումներու գլխաւոր լուրերու շարքին է կրկին Երեւանի ցոյցերն ու Ղարաբաղի իրադարձութիւնները:

Երբ հայ ժողովուրդը կարծես՝ սկսած էր համոզուիլ աստիճանական արդար լուծումի գաղափարին հետ, կացութիւնը անգամ մը եւս պայթեցաւ: Իսկ ինչպէս փաստերը ցոյց կուտան մեղաւորը ոչ թէ Ղարաբաղի և Հայաստանի հայութիւնն է, այլ անոնք որոնք կազմակերպեցին Սումկայիթի ջարդը: Այդ մութ ուժը կայ որ կը գործէ, երբէք հանգիստ պիտի չուզէ տալ ո՛չ հայութեան և ո՛չ ալ վերակառուցման ընթացքին: Երեւանի մէջ կատարուող ցոյցերը որակուեցան «վերակառուցման ականահարում, դաշինահարում» եւայլն, սակայն վերակառուցման դէմ ծառացող վտանգը Հայաստանէն չգար, ինչպէս ասկէ առաջ ըսինք, այսօր ալ կը հաստատենք նոյնը: Բուն վտանգը իսլամական շովինիզմը, փանթուրքիզմի մոլուցքն ու գորշ Գայլն է, որը սահմանին անմիջապէս միւս կողմն է:

Զգօնութեան պակասը կրնայ ծանր հետեւանքներ ունենալ բոլորիս համար: Ի՞նչ կատարուեցաւ Սումգայիթի ջարդէն և երիտասարդ ոճրագործի մը տասնհինգ տարի բանտարկութեան դատապարտումէն ետք: Ո՞ւր պիտի շարունակուի դատը, ո՞ւր են միւս ոճրագործները, դրդողներն ու ջարդի կազմակերպիչները: Արդեօ՞ք անոնք ներողութիւն խնդրած են և հարցը փակուա՞ծ է...:

Սփիւռքահայ մամուլին համար կացութեան վերլուծութիւնը և օրը-օրին լրատուութիւնը կը դժուարանայ, որովհետեւ պաշտօնական հաղորդագրութիւններ կամ շատ ուշ կը հասնին, կամ ընդհանրապէս չեն հասնիր: Այս յօդուածը գրուած պահուն տակաւին մեզի համար յստակ չէր աշակերտական օթօքարի վրայ եղած ոճրափորձին հետեւանքները՝ վիրաւորներուն և մահացողներուն թիւը: Մենք կը տագնապինք հեռատեսիլի վրայ երեւցող ցոյցերու տարողութեամբ և անոնց հաւանական հետեւանքներով, որոնք կրնան մէկ օրէն միւսը պայթիլ: Ո՞ւր կրնայ հասնիլ ներկայ կացութեան վախճանը.... բազմաթիւ հարցեր այսօր կը չարչարեն սփիւռքահայերը:

Ղարաբաղի արդար պահանջով ճամբայ ելանք, դժբախտաբար սակայն կացութիւնը այնպէս շրջուեցաւ, որ այժմ ինչ որ տեղ մէկուն կարծես պարտական ենք, մեզ լաւ չհասկցան:

Ղարաբաղի շարժման և պահանջատիրութեան զուգահեռ այսօր այլ հարցեր եւս եկան շիկացնելու մթնոլորտը: Կենսոլորտի պահպանման հրատապ ու տագնապալի իրողութիւնը, Ստալինեան ժամանակաշրջանի ու լճացման տարիներու դառն յիշողութիւնները երբեմն զուգահեռ կ'ընթանան Ղարաբաղի պահանջատիրութեան հետ: Արեւմտեան մամուլը կ'անդրադառնայ Երեւանէն հասնող կարգ մը ծայրահեղական տեսակէտներուն, այսօր նոյնպէ՛ս անոնց տարողութիւնն ու հաւաստիութիւնը ըստ էութեան ծանօթ չեն մեզի:

Մեզ կը մտահոգէ շատ կարեւոր ուրիշ երեւոյթ մը եւս. տարուան սկիզբը հրապարակ իջած մտաւորականներուն անունները այժմ կամ չեն լսուիր, կամ ընդհատ ու առիթներով անոնց ձայնը լսելի կը դառնայ: Մենք հաւատացած ենք, որ մտաւորականութիւնը մեծ դեր ունի կատարելիք: Կը գիտակցինք թէ կացութիւնը բարդ է ու դժուար, սակայն հաստատակամութիւնն ու վճռակամութիւնը մտաւորականի և մանաւանդ գրողի, արուեստագէտի գերագոյն կոչումն է: Մտահոգիչ է հրապարակի վրայ լսուող, արուեստագէտի, ընդհանրապէս մտաւորականի անուան յանկարծակի նահանջը: Ժողովուրդը կարիքն ունի անոնց ցուցմունքներուն և խորհուրդներուն: Հաւանական է որ որոշ խմբաւորումներ այնքան ալ գոհ չեն մտաւորականութեան շրջահայեաց ու սթափ կեցուածքէն, սակայն կը հաստատենք, թէ ժողովուրդը կը հաւատայ ու կը լսէ իր սիրելի գրողները, արուեստագէտներն ու միւս մտաւորականները: Անոնք իրենց խիզախ դիրքորոշումներով, կրքոտ պահանջատիրութեամբ և իմաստուն դատողութիւններով ցոյց տուին զանգուածները ճիշդ կողմնորոշելու ունակութիւնը: Ցոյցերու, երթերու, ընդհանրապէս պահանջատիրութեան ու բողոքի ծրագրումներու ժամանակ հրապարակը պէտք չէ թողուլ պատահականութեան: Պիտի գիտնանք զատորոշել կարեւորը երկրորդականէն, տրամաբանականը անտրամաբանականէն:

Մեր ժողովուրդը կը պահանջէ՛ Ղարաբաղը, մեր ժողովուրդի ապրելակերպը կարիքն ունի վերակառուցմա՛ն, կարիքն ունի նաեւ խաղաղութեան, ապահով կեանքի: Գիտնանք ճիշդ կողմնորոշուիլ: